

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2019 ԹՎԱԿԱՆԻ N - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀՐԱԶԴԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՀԵՏ
ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 64-րդ հոդվածի 2-րդ մասի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 24-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» ենթակետի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին ամրացված՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Հրազդան քաղաքի, Հարավային թաղամաս, Սպանդարյան 72 հասցեում գտնվող 7.071.471 ՀՀ դրամ սկզբնական արժեքով 954.57 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածքը, որի կազմում ներառված են երկհարկանի ձախակողմյան մասնաշենքն ու կենտրոնական մասնաշենքին միացնող միջանցքն և 0.1429 հեկտար մակերեսով հողատարածքը (անշարժ գույքի օգտագործման իրավունքի գրանցման 2014 թվականի ապրիլի 10-ի հ. 10042014-07-0032 վկայական) հետ վերցնել «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Հրազդանի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (գրանցման համար՝ 222.210.00176, գտնվելու վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Սպանդարյան 72):

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքում գտնվող 1197.50 քառ. մետր մակերեսով անշարժ գույքը (967.38 քառ.մետր կիսաքանդ դեղորայքի պահեստ, 7.89 քառ. մետր հարթակը, 168.59 քառ.մետր կիսաքանդ քիմիական նյութերի պահեստը, 2.82 քառ. մետր աստիճանավանդակը, 6.8 քառ. մետր կիսաքանդ պահակատունը, 19.79 քառ. մետր պարիսպը, 24.23 քառ. մետր պարիսպը՝ հետագայում հիմք ընդունել չափագրման արդյունքում վկայականում ներառված չափերը) հետ վերցնել «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և ամրացնել Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը:

2. «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» (պետական գրանցման համարը՝ 33.210.01646) պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համարը՝ 33.210.01609):

3. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է և վերջինիս են անցնում միացվող իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

4. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել.

1) «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, ինչպես նաև հաստատել սեփականության իրավունքով վերակազմակերպման արդյունքում ընդլայնվող պետական ոչ առևտրային կազմակերպությանը հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմն ու արժեքը, միացման պայմանագիրը և փոխանցման ակտը.

2) «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության դադարման պետական գրանցումը՝ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

3) «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխությունների կատարումն և պետական գրանցումը՝ նշված կազմակերպության միջոցների հաշվին:

4) միացման ձևով վերակազմակերպվող ուսումնական հաստատության ուսանողների հետագա ուսումնառությունը:

5. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված աշխատանքների ավարտից հետո, երկամսյա ժամկետում, լուծել «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 01.04.2014 թվականին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 19/0014 պայմանագիրը՝ սահմանելով որ պայմանագրի լուծման և օգտագործման իրավունքի դադարեցման հետ կապված ծախսերն ենթակա են իրականացման «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության

նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո քառամսյա ժամկետում «Հրազդանի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել 2012 թվականի նոյեմբերի 7-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 115/0012 պայմանագրում սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի մասով փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր)՝ սահմանելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն ենթակա են իրականացման՝ «Հրազդանի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

6. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի հետ համատեղ՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնել առաջարկություն՝ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքում գտնվող անշարժ գույքի հետագա օգտագործման վերաբերյալ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀՐԱԶԴԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵԶ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, գույք հանձնելու և գույք ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել է ՀՀ վարչապետի 2017 թվականի մայիսի 11-ի N 29.6/[404812]-17(19) նիստի արձանագրության 1-ին կետի 6-րդ ենթակետի հանձնարարականի կատարման շրջանակներում՝ կրթության ոլորտում գործող միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների թվաքանակի կրճատման և դրանց գործունեության օպտիմալացման (խոշորացման) նպատակով:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հրազդանի քաղաքային համայնքում /այսուհետ՝ համայնք/ գործում է «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ», «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան» և «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունները:

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում սովորում են 106 սովորող: Վերջինս իր ուսումնական գործունեությունը իրականացնում է Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Սպանդարյան 72 հասցեում գտնվող «Հրազդանի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված ուսումնական մասնաշենքի ձախակողմյան տարածքում /ՀՀ կառավարության 19.12.2013թ. N 1450-Ն որոշմամբ/՝ անհատույց օգտագործման իրավունքով: Ուսումնական տարածքը փոքր լինելու պատճառով խաթարվում է բնականոն ուսումնական գործընթացը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի» շրջանակներում կառուցման կամ ամրացման ենթակա դպրոցների ցանկում ընդգրկված է նաև «Հրազդանի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը և իրականացվող ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքներով նշված դպրոցի շենքը ենթակա չէ պահպանման՝ կոնստրուկտիվ լուծումներով պայմանավորված և քանդման է ենթակա նաև Հրազդանի պետական բժշկական քոլեջին հատկացված տարածքը:

Կարգավորման նպատակը

Հրազդան քաղաքում ուսումնական հաստատությունները խոշորացնելու և ուսումնական գործընթացը ժամանակակից նյութատեխնիկական բազայով հագեցնելու նպատակով առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպել, միացնելով «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 126-րդ հոդվածը սահմանում է. «Կազմակերպության վերակազմակերպումը, ինչպես նաև դրա նկատմամբ պարտավորական կամ այլ իրավունքներ ունեցող անձանց փոփոխությունը հիմք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե տեղի չի ունենում աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատում:»:

Միացման արդյունքում, նոր հաստիքացուցակի հաստատմամբ հնարավոր են հաստիքների կրճատումներ, մասնավորապես վարչական և ուսումնասօժանդակ, պայմանավորված նոր ուսումնական տարվա սկզբին արտադրական ծավալների փոփոխմամբ / սովորողների թվի փոփոխություն/:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից :

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է վերոնշյալ ՊՈԱԿ-ի միացման արդյունքում՝ ապահովել գործունեության արդյունավետության բարձրացում և պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործումը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հրազդանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, գույք հանձնելու և գույք ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնի:

		<p>(այսուհետ՝ Որոշում)՝ առաջարկում են Նախագծում նախատեսել դրույթ՝ Որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:</p> <p>5. Սույն գրության 4-րդ կետով ներկայացված առաջարկության ընդունման դեպքում՝ առաջարկում են Նախագծի վերնագիրը համապատասխանեցնել բովանդակությանը՝ փոխելով բնույթի մասին նշումը, քանի որ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով»՝ միաժամանակ Նախագծի նախաբանում հղում կատարելով նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածին:</p> <p>6. Նախագծի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված «մեկամսյա» բառը փոխարինել «երկամսյա» բառով, իսկ «01.04.2017» թվերը փոխարինել «01.04.2014» թվերով:</p> <p>7. Նախագծի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշել, որ «Հրազդանի N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ անշարժ գույքի անհատույց օգտագործման թիվ 115/0012 պայմանագիրը կնքվել է 2012 թվականի նոյեմբերի 07-ին:</p>	<p>5.Չի ընդունվում</p> <p>6.Ընդունվել է</p> <p>7.Ընդունվել է</p>	<p>ամրացվել է անշարժ գույք /օգտագործվել է իր նպատակների համար/, իսկ սույն որոշմամբ այն հետ է վերցվում, ինչպես նաև նշված որոշման մեջ կան այլ բովանդակության դրույթներ:</p> <p>5.Սույն առաջարկը չի ընդունվում, քանի որ չի ընդունվել գրությամբ առաջադրված 4-րդ կետը:</p> <p>6.Որոշման նախագծի 5-րդ կետի 1-ին ենթակետում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն:</p> <p>7.Որոշման նախագծի 5-րդ կետի 2-րդ ենթակետում առաջարկին համապատասխան կատարվել է լրացում:</p>
3.	<p>ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե 2019թ.-02-28 ՍՊ/1611-19</p>	<p>Առաջարկում է</p> <p>Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում չի կատարվել, ուստի առաջարկում ենք նախագծից հանել 1-ին կետի 2-րդ ենթակետը և դրան անդրադառնալ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելուց հետո:</p>	<p>Չի ընդունվում</p>	<p>Որոշման նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված ՀՀ Կոտայքի մարզի, Քաղսի համայնքում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքները ներկայումս իրականացնում է Կոմիտեն/համանքի հետ ճշտվում է հողի հատակագիծը/:</p> <p>Անշարժ գույքի և հողամասի նոր չափագրումները հիմք կհանդիսանան գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման համար:</p>
4.	<p>ՀՀ Կոտայքի մարզպետարան 2019-03-01 01/06.1/01397-2019</p>	<p>Առարկություններ և առաջարկություններ չկան:</p>		
5.	<p>ՀՀ արդարադատության նախարարություն 2019-03-28 01/14/6577-19</p>	<p>Առաջարկություններ չկան:</p>		
6.	<p>ՀՀ</p>	<p>Առարկություններ և առաջարկություններ չկան:</p>		

	տարածքային կառավարման և զարգացման նախարարություն 2019-03-29 01/15.1/2646-19			
--	--	--	--	--